Տ. ՀՄԱՅԱԿ ԱԲԵՂԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(24 հունվարի 2010 թ..)

«Ապրված այնքան սիրեց աշխարհը,
որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց,
որպեսզի նա, ով հավատում է Նրան,
չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»:
(Յովհ. Գ 16)

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Քրիստոս.

Մինչ բեթղեհեմյան ապրողի շողարձակելը ողջ հեթանոս աշխարհը՝ ի դեմս հռոմեական ծովածավալ կայսրության, խարխափում էր խավարի ու անգիտության, ծայրահեղության հասնող մարդապաշտության եւ սնոտիապաշտության մեջ: Իսկ հրեական միջավայրում մեսիական փնտրտուք էր ու սպասում:

Մի նոր ուսմունք, ապրվածառաք մի նոր վարդապետություն գալիս է հեղաշրջելու այս իրականությունը: Այս վարդապետությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ ավետիսը հոգիների փրկության եւ քրիստոսադրոշմ հավիտենական կյանքի:

Այս ավետիսը ցնցեց աշխարհը, նոր հորիզոններ, նոր մշակույթ, նոր ապրվածճանաչողություն բերեց եւ ողողեց մարդկության հետագա ողջ ընթացքը:

Այսօր իհարկե դժվար է եւ գրեթե անհնար գերագնահատել ապրվածաբուխ լույսի ու հոգեշահ վարդապետության դերը, որ մարդկությանը մատուցվել ու մատուցվում է իբրեւ պատգամ եւ կենսակերպ:

Նորկտակարանյան եւ ընդհանրապես սուրբգրային վկայությունները մեզ մեկնում եւ լուսաբանում են հավերժությունից եկող ու դեպի հավերժություն գնացող ապրվածահիմն եւ տիեզերական օրենքները: Իսկ մենք, որ այս ամենի անցողիկ վկաներն ենք, փորձում ենք մերովսանն ընկալել եւ արժեւորել մեզ տրված ապրվածաբաշխ կյանքի վայրկյաններն ու ոսպեները:

Սիրելինե՛ր, վստահ եմ, որ մեզանից յուրաքանչյուրը առիթ է ունեցել խորհելու այն հարցերի շուրջ, որոնք մշտապես արդիական են եւ պատված խորհրդավորության շղարշով: Ինչպես օրինակ՝ որտեղի՞ց ենք գալիս, ո՞ւր ենք գնում, ո՞ր ճանապարհով ընթանանք, ինչպե՞ս ապրենք, փիլիսոփայական ու գիտական բանաձեւումների՞ն հավատանք, թե՞ կրոնական հայտնություններին:

Անշուշտ, մենք, իբրեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու զավակներ, հետեւում ենք եւ պետք է հետեւենք հայադրոշմ եւ հայրաբարբառ քրիստոնեությանը: Սակայն ոչ թե պարզապես կուրորեն հավատանք, այլ ուսումնասիրենք, քննենք եւ ապրենք:

Ուսպի, սիրելիներ՛ր, փորձենք քննել եւ հասկանալ այս աստվածային փնտրտու�ությունը, որը բազում հարցականների տեղիք է տալիս:

Ինչո՞ւ Աստված Իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ, ինչո՞ւ թույլ տվեց, որ արարվածն անասելիորեն չարչարի, մահվան սյունին գամի, այսինքն՝ խաչի Իր Արարչին: Եվ մի՞թե Աստված չէր կարող ոչ թե Իր Միածին Որդուն զոհել, այլ մեզ՝ մեղավորներիս: Այս հարցերի պատասխանը հստակ եւ շեշտակիորեն տալիս է Որոտման որդին՝ Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննես Ավետարանիչը. «Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տվեց»: Առաջին հայացքից սա մեզ համար անհասկանալի եւ անընդունելի պատասխան է: Սակայն երբ սկսում ենք փոքր առ փոքր մեր մտքում ուրվագծել մարդկային եւ մասնավորապես՝ աստվածային սիրո սահմանները, հասկանում ենք, թե այն որքան մեծ, որքան խորը եւ որքան տարողունակ է, քանզի ինչպես նույն Առաքյալն է ի լուր բոլորիս հայտարարում, թե Աստված սեր է, այնպես էլ արարչագործության յուրաքանչյուր նյութական եւ զգացական բան՝ սկսած տիեզերական ամենաբարդ համակարգերից, վերջացրած առվակի քրքջոցով կամ բզեզի աչքի կառուցվածքով:

Հարց է ծագում. մի՞թե սերն այնքան որոշ է ու զորեղ, որ կարող է տիեզերքի ու աշխարհի արարչության պատճառ դառնալ, որ կարող է թշնամուն բարեկամ դարձնել ու մեր կյանքի մեզն ու խավարը փոխել աստվածային լույսով եւ խաղաղությամբ: Եւ վերջապես, ինչպե՞ս կարող է կյանք տվողին Աստծո եւ մարդու միջնորդ դարձնել:

Երանաշնորհ Հայրապետ Հովհան Մանդակունին իր «Սիրո մասին» ճառում հանգամանալից անդրադարձել եւ մեկնել է աստվածային սիրո բոլոր դրսեւորումները: Նա սերը համարում է երկնքի արքայության բանալի, հավիտենական կյանքի ճանապարհ ու բոլոր բարիքների պատճառ. «Սերը ոչ միայն հավիտենական կյանքում է պտղաբերում իր խաղաղության պտուղը, այլ նաեւ այս աշխարհում է հալածում ամենայն թշնամություն՝ նախանձն ու ատելությունը, ոխակալությունն ու չարակնությունը, չարախոսությունն ու հայհոյությունը, տրտունջքն ու բամբասանքը, հպարտությունն ու գոռոզությունը, մանավանդ բոլոր չարիքների մայր արծաթասիրությունն ու ագահությունը»: Իսկ եռամեծար վարդապետ Սուրբ Գրիգոր Տաթեւացին սերը հետեւյալ կերպ է բանաձեւում. «Սիրել նշանակում է ուրիշներին բարի կամենալ»,- այնուհետեւ շարունակելով բացատրում է, որ սիրո սկիզբը կամքն է, կատարումը, այսինքն՝ ավարտը, բարիք գործելը, իսկ դրանց մեջ՝ սերը: Քանզի կամքը մեզանով է լինում, բարիք գործելը՝ ուրիշներով, իսկ երկուսը կատարվում են սիրո ներգործությամբ:

Թե՛ հայ, թե՛ օտարազգի եկեղեցական հայրերը այս կամ այն չափով անդրադարձել են աստվածային սիրո դրսեւորումներին, նկարագրել սերն իր համապատկերի մեջ՝ իր բոլոր նրբերանգներով: Սակայն մի բան պետք է իմանանք եւ հիշենք, որ սերն աստվածային է ու հավիտենական, եւ աշխարհը սպունգի նման ներծծված է աստվածային սիրով, որ մշտաբորբոք փարոսի նման մեզ զարմացնում ու ջերմացնում է իր արեգակնաբուխ ճաճանչներով:

Սիրելիներ՛ը, եթե խոսենք սիրուն ձոնված նորկտակարանյան մյուս կոչ-պատգամների մասին, բավական է հիշենք Հովհաննես առաքյալի Ընդհանրական առաջին նամակի հետեւյալ խոսքերը.

«Սիրելիներ՛ը, սիրենք միմյանց, որովհետեւ սերն Աստծո պարգեւն է: Ով սիրում է, նա ծնված է Աստծուց եւ ճանաչում է Աստծուն: Ով չի սիրում, նա չի ճանաչում Աստծուն, որովհետեւ Աստված սեր է»:

Քայլ առաջ գնալով՝ եզրակացնենք, որ մեզ՝ քրիստոնյաներիս համար ամեն ինչի լրումը սերն է. որտեղ սեր չկա, այնտեղ բնակվում է խավարի իշխանը՝ հակաքրիստոս:

Ուրեմն, սիրելիներ՛ը, մշտարթուն աղոթքներով, դեպի հավիտենականություն առաջնորդող սիրո գիտակցումով, անկաշառ աստվածասիրությամբ ու եղբայրասիրությամբ համեմենք մեր այս անցավոր կյանքը, ու թող իրապես մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհներն ու սերն առատապես հեղվեն բոլորիս վրա. Ամեն: